ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Հարկադիր կատարողը՝

1) իրականացնում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը,
2) իրականացնում է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործընթացը,
3) իրականացնում է պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու գործառույթը,
4) իրականացնում է պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում,
5) իրականացնում է կատարողական գործողություններ՝ հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի դրույթները,
6) իր գործառույթներն իրականացնում է «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքների և պարտականությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է Ծառայության կանոնադրական խնդիրներից և նպատակներից բխող այլ գործառույթներ:

2.Պաշտոնին ներկայացվող պահանջներ.

Աշխատանքային ստաժ և աշխատանքի բնագավառում փորձ չի պահանջվում:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: